ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

15 ՀՈՒԼԻՍԻ 2024 թ.
№ 13 (1129)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

«Մի վախեցեք երազել, սխալվել և այդ սխալների վրա սովորել»,–
ասում է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը

Մանկավարժական համալսարանի 2023-2024 ուսումնական տարվա գերազանցությամբ ավարտած մի խումբ ուսանողներ հուլիսի 9-ին հանդիսավար պայմաններում ավարտական դիպլոմներ ստացան:

Տարին խորհրդանշական էր այս տարվա շրջանավարտների համար. Ուսանողական խորհուրդը նշում էր իր հիմնադրման 30-ամյակը:

Շրջանավարտներին շնորհավորեց և բարի երթ մաղթեց Մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը: Ռեկտորը բարձրաձայնեց՝ խինդը, բերկրանքը և հուզականությունը բուհի ֆակուլտետներում մեկտեղվել է տխրության հետ:

Բանասիրական ֆակուլտետի բակում իրականացված հանդիսությունը նման խինդով ու թախիծով էր լցրել շրջանավարտների սրտերը: Դիմելով շրջանավարտներին՝ ռեկտոր Սրբուհի Գևորգյանն ասաց. «Համոզված եմ, որ բակալավրիական կրթություն ստացածները շարունակելու են իրենց կրթությունը, այս տարիներին ձեռք եք բերել ոչ միայն գիտելիքներ, մասնագիտական կարողություններ, այլև զինվորագրվել եք մեր համալսարանի մեծ ու ջերմ ընտանիքին: Համոզված եմ, որ կրթության ուսուցման և մասնագիտական ոլորտում ձեր ցանկությունները բավարարելու նոր հնարավորություն է ընձեռվելու հենց մեր համալսարանում: Համոզված եմ՝ մագիստրոս շրջանավարտները նորանոր ձեռքբերումներ են ունենալու այն մասնագիտական տիրույթում, որոնք նախանշում են նախադպրոցական կրթական հաստատություններից մինչև սոցիալական աջակցության կենտրոններ, արվեստի ոլորտ»:

Ռեկտորը վստահեցրեց՝ ուսուցչական համայնքը համալրվելու է որակյալ շրջանավարտներով, և որ համալսարանը ցտեսություն չի ասում շրջանավարտներին, որովհետև կրթության և մասնագիտության բազմաթիվ ոլորտներում նրանց հետ հանդիպումները շարունակվելու են:

ԿԳՄՍ նախարար, ՀՊՄՀ Խորհրդի նախագահ Ժաննա Անդրեասյանը շնորհավորեց շրջանավարտներին: Նա կարևորեց տոնական օրը, քանզի «այսօր ձեզ ճանապարհելու, ձեզ դիմավորելու, գնահատելու, հաջողություններ մաղթելու հնարավորություն ունենք»:

Նախարարը վստահեցրեց՝ այսօր ձեր մտքում և հիշողություններում ունենալու եք ամենահիշարժան օրերից մեկը. «Ուզում եմ, որ օրը ձեզ համար նշանավորվի իբրև նոր փուլի սկիզբ, որն առաջին հերթին լինելու է մասնագիտական հաջողությունների և ձեռքբերումների փուլ, և դրանք լինելու են մեր պետության ու երեխաների հաջողություններն ու ձեռքբերումները: Ձեր որակավորումները սովորական չեն, դա աշխատանք է, որ պետք է ունենաս սրտացավություն, հետևողականություն ու հոգատարություն, որպեսզի դրանք դառնան կյանքի գործ:

Սա առաջին հերթին մեծագույն պատասխանատվություն է, և վստահ եմ, որ բուհի տված գիտելիքներն ու հմտությունները կօգնեն, որ ամեն բարդ իրավիճակում ճիշտ կողմնորոշվեք, ճիշտ արժեքներով առաջանորդվեք: Մնացածը գալու է մասնագիտական փորձառությամբ, շարունակական ինքնակրթությամբ և այստեղ է, որ համալսարանի հետ կապն ավելի եք ամրապնդելու՝ որպես գործընկերներ»:

Նախարարը վստահեցրեց, որ պատրաստ են այսքան նոր մասնագետների, երիտասարդների հյուրընկալել դպրոցներում, մանկապարտեզներում և այլ հաստատություններում, միաժամանակ ընդգծելով, որ շրջանավարտներն իրենց ներգրավվածությամբ մեր երեխաների կրթությունը դարձնելու են առավել որակյալ:

Նախարարը փաստեց՝ Կառավարությունը մեծ ջանքեր է ներդնում, որ ուսուցիչն իր մասնագիտության մեջ լինի գնահատված, արժևորված, աշխատանքային պատշաճ պայմաններով, իսկ ուսուցչական մեծ բանակը միշտ ունի նոր կադրերի ու ներուժի կարիք. «Մի վախեցեք երազել, սխալվել և այդ սխալների վրա սովորել»:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը ևս շնորհավորեց շրջանավարտներին՝ մաղթելով լուսավոր, հետաքրքիր և արդյունավետ ճանապարհ: Նա նկատեց՝ շրջանավարտների կյանքի կարևոր մեկ փուլ ավարտվեց և էլ ավելի կարևոր ու պատասխանատու նոր փուլ է սկսվում, որ ոլորտում նոր մասնագետների, երիտասարդների կարիքը շատ կա:

Օրը հուզառատ էր համալսարանի բոլոր ֆակուլտետներում. վաղ առավոտից շրջանավարտներն ավարտական դիպլոմներ ու շնորհավորանքներ էին ստանում ֆակուլտետների ղեկավարության, քննական հանձնաժողովների նախագահների ու պրոֆեսորադասախոսական կազմի կողմից, իրենք էլ իրենց հերթին խոստանում զինվորագրվել այն բանակին, որի առաջին ուսուցիչը եղել է Մեսրոպ Մաշտոցը:

Տոնական օրվա ավարտը խորհրդանշվեց սիրված երգիչների՝ Գոռ Սուջյանի, Սոֆի Մխեյանի ու մյուսների մասնակցությամբ համերգային ուրախ ծրագրով:

Ստորագրվեց փոխգործակցության համաձայնագիր

Հուլիսի 10-ին Մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանն ընդունեց Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի տնօրեն Վահե Բաբայանին: Ստորագրվեց փոխգործակցության համաձայնագիր:

Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը հնարավոր է համարում համատեղ գործակցությունը, մանավանդ, որ համալսարանի մասնագիտությունների որոշակի առարկայախումբն այդ հնարավորությունը տալիս է. կարծում է՝ պետք է համագործակցության եզրեր գտնել Հատուկ և ներառական կրթության և Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետների համապատասխան մասնագիտությունների հետ, որը նաև կնպաստի հասարակության խոցելի խմբերի հետ աշխատանքին: Միաժամանակ ընդգծեց՝ Մանկավարժականը դիտարկում է բոլոր հարթակները ֆակուլտետներն ուժեղացնելու, տարբեր կառույցների հետ համագործակցությունը փոխշահավետ դարձնելու հեռանկարները:

Ռեկտորն անդրադարձ արեց կրթության ոլորտում ժամանակակից մարտահրավերներին դիմակայելուն, կարևորեց միջազգային տենդենցները, ինտերակտիվ շփումները գիտական շփումների վերածելու՝ վեբինարների ու սեմինարների համատեղ անցկացման ձևաչափով: Ապա խոսեց հոգեբանության հետ բժշկության աղերսների, հոգեբանների ու բժիշկների փոխշահավետ համագործակցության մասին: Գործնական խոսակցությունը ծավալվեց շարունակական կրթության, Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի շրջանավարտների բուհական կրթությունը Մանկավարժական համալսարանում կազմակերպելու հնարավորությունների մասին:

Սրբուհի Գևորգյանը քոլեջի շրջանավարտների շարունակական կրթության հնարավորությունը դիտարկեց բուհի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետում, որն իր ուսումնական պլաններում ունի թե՛ բժշկահոգեբանական, թե՛ կենսաբանաֆիզիոլոգիական առարկայախումբ:

Ըստ Սրբուհի Գևորգյանի, եթե դիմորդն ունի միջին մասնագիտական կրթություն, որոշակի ուղղվածություն և որի մասնագիտական դասընթացները համընկնում է բուհի ուսումնական դասընթացներին, երկուստեք փոխշահավետ է և արդյունավետ կողմերի համար:

Առաջիկայում Մանկավարժականում կդասավանդվեն հատուկ մանկավարժություն և հատուկ հոգեբանություն մասնագիտությունները, իսկ ներդրված էրգոթերապիան կնպաստի անհրաժեշտ խոցելի խմբերին առավել որակյալ ծառայությունների մատուցմանը:

Սրբուհի Գևորգյանն անդրադարձավ օրեցօր նվազող ապրումակցմանը, հասարակության զարգացող էկրանային մտածողությանը, մարդու էմոցիոնալ վիճակները վերարտադրող գործիքների բացակայությանը, միջազգային գիտաչափական շտեմարաններում տպագրվող հոդվածներին:

Վահե Բաբայանը համառոտ ներկայացրեց Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի գրեթե երեք տասնամյա գործունեությունը. միջնակարգ մասնագիտական հաստատության մասնագիտությունները, անընդհատ ընդլայնվող միջազգային գիտական կապերը, մասնավորապես էրազմուս + միջազգային ծրագրի և մերձբալթյան երկրների հետ աշխատելու փորձը: Նա ընդգծեց՝ իրենց առաքելությունն է ունենալ մրցունակ շրջանավարտներ, իսկ նրանցից շատերը ցանկանում են կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում, մասնավորապես Մանկավարժականում:

Հանդիպմանը մասնակցում էր ՀՊՄՀ աշխատակազմի և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը: Նա անդրադարձավ ՀՊՄՀ միջազգային կապերի ուղղությամբ բուհի արդյունավետ փորձին՝ ներկայացնելով Լեհաստանի հետ համագործակցելու փորձառությունը և Պորտուգալիայի Ավեյրոյի համալսարանի հետ առաջիկայում մի ծրագրի շուրջ նախապատրաստական աշխատանքներին:

Ստորագրված համաձայնագիրը հնարավորություն կտա տարբեր մասնագիտությունների գծով բուհում կազմակերպել քոլեջի շրջանավարտների ուսուցումը, համագործակցել ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի փոխհամաձայնեցման և կատարելագործման առումով, քոլեջին կցուցաբերվի համապատասխան մեթոդական և մասնագիտական աջակցություն:

Ս. ԱՍՐՅԱՆ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎՈՒՄ

Մեկնարկել է արդեն 5-րդ անգամ անցկացվող «EduArmenia2024» համահայկական գիտակրթական աշխատաժողովը, որի նպատակն է ներկայացնել հանրակրթության ոլորտի բարեփոխումների լավագույն փորձը:

Աշխատաժողովի բացմանը մասնակցել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը, ՀՀ լեզվի կոմիտեի նախագահ Սիրանուշ Դվոյանը, ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավար Վաղարշակ Մատիկյանը, ԿԶՆԱԿ հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար Արտաշես Թորոսյանը, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը, «EDUArmenia»-ի համահիմնադիր Լիլիթ Մկրտչյանը, ոլորտի մասնագետներ, շահագրգիռ կառույցների ներկայացուցիչներ:

Աշխատաժողովի ընթացքում կրթության ոլորտի ներկայացուցիչները հանդես են եկել ոլորտի զարգացմանն ու բարեփոխումներին նվիրված բանախոսություններով և դասախոսություններով:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը ողջունել է ներկաներին և վստահություն հայտնել, որ բոլոր քննարկումներն ու ելույթները, փորձի փոխանակման ձևաչափերը կատարված աշխատանքի արժևորման ևս մեկ հնարավորություն են: «Աշխատաժողովը կարևոր է ոչ միայն փորձը կիսելու, այլև փորձի շուրջ խորհելու առումով»,- ասել է նա:

Ըստ ԿԳՄՍ նախարարի տեղակալի՝ անցնող ուսումնական տարին բարդ էր՝ պայմանավորված մի շարք փոփոխություններով. «Հանրակրթության պետական չափորոշիչը ներդրվեց երեք դասարաններում, փոխվեց դպրոցների ֆինանսավորման մեխանիզմը և այլն: Արագությամբ ընթացող փոփոխությունների պարագայում բարդ է տեղերում աշխատել և արագ կողմնորոշվել՝ պահպանելով արդյունավետությունը և նպաստելով կրթության որակի բարձրացմանը: Ուսումնական տարվա ընթացքում մեր հանդիպումներն ուսուցչական համայնքի հետ ցույց են տվել, որ չնայած բարդություններին՝ գրանցել ենք դրական արդյունքներ: Թեև դրանք փոքր են կամ միգուցե ոչ այնչափ, որքան ակնկալվում էր ի սկզբանե, բայց, այնուամենայնիվ, ունենք դրական դինամիկա»:

Արաքսիա Սվաջյանը նշել է՝ ցանկացած նոր գործընթաց իր հետ բերում է փորձություններ և բազմաթիվ հարցեր, որոնց լուծումները հենց այսպիսի աշխատաժողովների ընթացքում է նաև հնարավոր գտնել:

«Մեզ համար շատ կարևոր է, որ մանկավարժական համայնքն ակտիվ լինի այս գործընթացում, և կիրառման փուլում հենց իրացնողներից ստանանք արձագանք: Կարևոր է, որ չափորոշչի վերաբերյալ արձագանքները դրական են ոչ միայն մանկավարժներից, այլև աշակերտներից, որոնք վստահեցնում են՝ ուսումնական գործընթացն առավել հետաքրքրական է դարձել, փոխվել է մոտիվացիան»,- ասել է Արաքսիա Սվաջյանը:

Նա կարևորել է նաև ծնողական համայնքի արձագանքը, ըստ որի՝ փոփոխություններ են նկատվում թե՛ երեխաների զբաղվածության ու հետաքրքրություններին, թե՛ դպրոցի հետ հետադարձ կապի կազմակերպման հարցերում:

Որպես խնդիր՝ փոխնախարարը մտահոգիչ է համարել երբեմն հնչող կարծիքները, թե երեխաները չեն ուզում սովորել դպրոցում. «Մեզ համար առաջնային է դպրոցում ճիշտ մթնոլորտ ձևավորել՝ կարևորել ամենաառաջին կարողունակությունը՝ սովորեցնել սովորել, որ երեխաները հասկանան՝ ինչու սովորել և սովորելու դեպքում ինչ արդյունքի կհասնեն»,- ասել է նա:

Նոր դասագրքերի մեծ մասը երաշխավորվել է տպագրության:

Արաքսիա Սվաջյանի տեղեկացմամբ՝ առաջիկա ուսումնական տարում ևս 4 դասարանում ներդրվելու է հանրակրթության պետական չափորոշիչը: Դասագրքերն արդեն փորձաքննվել են. մեծ մասն արդեն երաշխավորվել է տպագրության, մի մասն էլ կրկնակի փորձաքննության փուլում է:

«Ամեն ինչ արվում է, որպեսզի օգոստոսի վերջին տասնօրյակում բոլոր դպրոցներն ապահովված լինեն դասագրքերով»,- ասել է ԿԳՄՍ նախարարի տեղակալը՝ շեշտելով դասագրքերից օգտվելու ստանդարտ ձևերից հրաժարվելու և դրանք ավելի ճկուն օգտագործելու կարևորությունը:

«Նոր ձևաչափերով դասագրքերը գուցե ուսուցչի համար որոշակի դժվարություն առաջացնեն, բայց մյուս կողմից՝ մանկավարժությունը ստեղծագործական գործընթաց է, և մենք քաջալերում ենք, որ դասերը տարիներ շարունակ կրկնված ձևաչափերից մի փոքր դուրս գան ու դառնան ճկուն ու ստեղծագործ՝ ժամանակին համընթաց: Դա ենթադրում է՝ անել հնարավորը, որ այսօրվա հետաքրքիր, խելացի, ինֆորմացված, ակտիվ սերունդը սիրի սովորելը հենց դպրոցում: Մեր դպրոցները պետք է դարձնենք այն միջավայրը, որ երեխաները ոչ թե ուրախանան արձակուրդ գնալիս, այլ ափսոսան, որ դպրոց չեն հաճախելու»,- իր տեսլականն է ներկայացրել Արաքսիա Սվաջյանը:

Գործարկվելու է դպրոցի տնօրենի հավակնորդների վերապատրաստման ծրագիր:

Փոխվել է դպրոցների կառավարման մոդելը. տնօրեններն ազատվել են վարչատնտեսական խնդիրներից, որոնք զբաղեցնում էին նրանց ժամանակի գերակշիռ մասը: Արաքսիա Սվաջյանը նշել է՝ բազմաթիվ դպրոցներում այժմ չկան տնօրեններ. նույնիսկ մի քանի անգամ հայտարարված մրցույթների արդյունքում այդ տեղերը չեն համալրվում:

Այս մտահոգիչ պատկերը խոսում է ոլորտի բացերի մասին՝ օրախնդիր դարձնելով ուսուցչական, կառավարչական համայնքների կարողությունների զարգացման անհրաժեշտությունը. «Առաջիկայում ունենալու ենք դպրոցների տնօրենների հավակնորդների խորքային վերապատրաստման ծրագիր՝ 7 ամիս տևողությամբ: Այդ ընթացքում նրանք սովորելու են զարգացման ծրագիր գրել՝ լրամշակելով իրենց ներկայացրած զարգացման ծրագրերը՝ փորձագետների աջակցությամբ: Ավարտողներն ունենալու են պատրաստի զարգացման ծրագիր, և հաջողությամբ պաշտպանելու դեպքում կդառնան տնօրենների պոտենցիալ թեկնածուներ: Փորձում ենք դպրոցներին ազատել կրթության որակի հետ ուղիղ կապ չունեցող բոլոր գործընթացներից: Որոշ ծառայությունների համար արտապատվիրակման մեխանիզմն է ներդրվելու. կան կազմակերպություններ, որոնք հստակ գիտեն, թե ինչ է դպրոցի պահպանությունը, գնումների գործընթացը և կկարողանան հաջողությամբ իրականացնել այդ գործառույթները»:

Փոխնախարարը կարևորել է նաև դպրոցներում պատշաճ ենթակառուցվածքների, միջավայրի, անհրաժեշտ գույքի և ուսումնալաբորատոր բազայի ապահովումը: Տավուշի և Արմավիրի մարզերի բոլոր դպրոցներում արդեն առկա են լաբորատորիաներ. մինչև տարեվերջ կհամալրվեն նաև Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու և Շիրակի մարզի դպրոցները:

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

Ալլա ՍԱՀԱԿՅԱՆ
Հատուկ և ներառական \կրթության ֆակուլտետ

Կարծրատիպեր կոտրող Ալլան

Ալլա Սահակյանը Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի շրջանավարտ է: Նա այս տարի գերազանցությամբ ավարտեց Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի մագիստրատուրան: Մասնագիտությամբ տիֆլոմանկավարժ է:

Ալլայի մասին գրվել է «Կարծրատիպեր կոտրող 7 կանայք» գրքի մեջ:

Եթե ծանոթ լինեք աղջկա կենսագրությանը՝ կհամոզվեք, որ նա իրենով իսկապես կարծրատիպեր կոտրող երիտասարդ է, ակտիվ խառնվածքով անհատ:

Ալլա Սահակյանը Հայաստանում կույր ֆուտբոլի թիմի ավագն է և մարզածևի զարգացման համակարգողը: Միաժամանակ աշխատում է «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպությունում տեսողության խնդիրներ ունեցող անձանց հետ՝ սովորեցնելով նրանց ինքնուրույն տեղաշարժվել:

Հատուկ կարիքների խնդիրներ ունեցող յուրաքանչյուր անհատ պետք է իրեն լիարժեք զգա հասարակության մեջ: Բայց ոչ բոլոր են կարողանում հաղթահարել կարծրատիպերը: Ալլան առաջիններից է. նա ոչ միայն կարողանում է հաղթահարել խնդիրները, այլև ակտիվ հասարակական կյանք է վարում՝ ներգրավելով հաշմանդամություն ունեցող անձանց սպորտային մարզումներում, սպորտը կապելով տիֆլոմանկավարժության հետ:

«Ինքս ունենալով տեսողության խնդիր՝ դարձել եմ տիֆլոմանկավարժ, որպեսզի փորձս կիսեմ նրանց հետ, ովքեր ունեն այն ամենի կարիքը, ինչը ժամանակին ես եմ ունեցել: Իմ աշակերտները սովորում են կողմնորոշվել իրենց նախընտրած տարածքներում, ամենակարևորը՝ սպիտակ ձեռնափայտի օգնությամբ: Այսինքն՝ քայլում են ինքնուրույն:

Աշխատանքս համարում եմ ամենամեծ հաջողություններիցս մեկը,-ասում է Ալլան:- Տիֆլոմանկավարժը անձին օգնում է զարգացնել և ճիշտ օգտագործել բոլոր զգայարանները, իմանալ օրինակ՝ առարկաներն ինչպե՞ս շոշափել, որպեսզի դիպչելիս անվտանգ լինեն, ինչպե՞ս «լսել փողոցը», այսինքն՝ որտե՞ղ ես դու գտնվում և քո դիրքը ինչպե՞ս պետք է օգտագործես:

Դպրոցական տարիքից ինձ դուր չի եկել ինչ-որ մեկից կախված լինելը: Միշտ մտածել եմ՝ ինչո՞ւ պետք է սպասեմ, որ ինչ-որ մեկը ժամանակ տրամադրի՝ ինձ ուղեկցի:

Հիշում եմ, որ մի օր եղբայրս ինձ ուղեկցելուց հետո ասաց. «Գիտես, որ կարող եմ քեզ ուղեկցել, բայց կգա մի օր, երբ չեմ կարողանա, հարմար չի լինի: Պետք է մենակ գնաս: Ես էլ ասացի՝ կգնամ»:

Տնից համալսարան ինքնուրույն գնալը Ալլան համարում է իր կյանքի առաջին մեծ ձեռքբերումը, իսկ այսօր արդեն նաև ամենամեծ ու ամենապատասխանատու ձեռքբերումը, որ կարողանում է ոչ միայն ինքնուրույն տեղաշարժվել, այլև օգնել տեսողության խնդիրներ ունեցող անձանց ևս՝ սովորեցնելով նրանց ինքնուրույն տեղաշարժվել:

Կույրերի սպորտի միջազգային ֆեդերացիայի կողմից մարզընկերոջ հետ նա վերապատրաստվել է Հունգարիայում և այժմ զբաղվում է Հայաստանում բացառիկ մի մարզածևով՝ կույր ֆուտբոլով: Հայաստանում ոչ միայն ներդրել է այդ մարզածևը, այլև համակարգում է, որպեսզի մարզածևը զարգանա:

Կույր ֆուտբոլ մարզածևը տեսողության խնդիրներ ունեցողներին օգնում է հաղթահարել վախերը, հոգեբանական բարդույթներն ու նաև առողջական խնդիրները:

Ալլայի դիպլոմային աշխատանքի թեման եղել է «Կույր ֆուտբոլը որպես տեսողության խանգարումներ ունեցող անձանց սոցիալիզացիայի միջոց», ինչը նույնպես Ալլայի մեծ ձեռքբերումներից է:

Ալլա Սահակյանը ցավով է նկատում՝ Հայաստանում ուսումնական հաստատությունները չեն ապահովում մատչելի միջավայր տեսողության տարբեր խնդիրներ ունեցողների համար, իսկ հաշմանդամություն ունեցող սովորողներին դուրս են թողնում ֆիզիկական պատրաստվածության դասերից:

Ընտանիքում տեսողության խնդիր ունի նաև Ալլայի եղբայրը, բայց մայրը նրանց երբեք չի վերաբերվել որպես խնդիր ունեցողների, երբեք չի ասել՝ «չեն տեսնում, ուրեմն չեն կարող»: Փոխարենը հարմարման միջավայր է ստեղծել, ինչը շատ կարևոր է:

Ալլայի կյանքը միշտ չէ, որ դյուրին է ու հարթ, շատ հաճախ դժվարացել ու հուսահատվել է, բայց հաջորդ պահին հասկացել է, որ հապաղելն ու հետ կանգնելը նշանակում է դադարել հետամուտ լինել խնդիրներին, չապրել իր ուզած կյանքով:

Ալլան սիրում է աշխատել հայրենիքում, մեծագույն հաճույք է ստանում իր աշխատանքից և գիտի՝ շատերն ունեն իր օգնության կարիքը: Աշակերտներին էլ հորդորում է՝ կանգ չառնել ու չշեղվել դեպի ինքնուրույնություն տանող ճանապարհից:

Ալլան տեսողության խնդիրներ ունեցող աղջիկ է, որ չի վախենում դժվարություններից և ինքնուրույն հաղթահարում ու կոտրում է կարծրատիպերը:

Եվ Ալլան մեր բուհի շրջանավարտն է, որով հպարտանում ենք:

Անի ՂԱԶԱՐՅԱՆ
Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետ

Եթե կա երազանքին հասնելու մեծ ձգտում

Բարև ձեզ, ես Անի Ղազարանն եմ, մասնագիտությամբ՝ հատուկ մանկավարժ-լոգոպեդ:

Նախասիրություններս շատ են, որոնցից մեկը եղել է և մնում է կրթվելը, անընդհատ ինքնակրթվելը, նոր գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելը, մարդկանց լսելը, հասկանալը, աջակցելը: Դե, իսկ երեխաները հատուկ տեղ են զբաղեցնում իմ կյանքում: Տրված եմ նրանց կրթելու և դաստիարակելու, ինչպես նաև շտկողական գործընթացին, քաջ գիտակցելով, որ նրանք են մեր վաղվա օրը և իրենց տան լույսը:

Ընտրածս մասնագիտությունը, կարծում եմ, եթե անձ լիներ, նման կլիներ ինձ և կարծես՝ հակառակը եղավ՝ մասնագիտությունս ընտրեց ինձ: Այս մասնագիտությունն ընտրելիս արդեն իսկ տեղեկացված էի և ուսումնասիրել էի զարգացման տարբեր խնդիրների մասին՝ սովորելով Մանկավարժական համալսարանի հատուկ մանկավարժության բաժնում: Խոսքային խանգարումներ ունեցող անձինք միշտ գրավում էին իմ ուշադրությունը, այն պարագայում, երբ խոսքը կարևոր ցուցիչ է մարդու հոգեկանի մասին: Գնացի դրանց բացահայտման, ուսումնասիրման հետևից, որով էլ զբաղվում է այդ աստվածաճռռ մասնագիտությունը:

Լոգոպեդիան մասնագիտություն է խոսքային խանգարումների, դրանց կանխարգելման, բացահայտման և շտկման մեթոդների մասին և ուսումնասիրում է խոսքի խանգարման պատճառները, զարգացման մեխանիզմները, ախտանիշները, կառուցվածքը, մշակում շտկման մարտավարության համակարգը, և այդ ամենը սերտ կապված է հատուկ հոգեբանության հետ: Հետագայում ամբողջովին նվիրվեցի այս մասնագիտությանը և արդեն երկրորդ կուրսից սկսեցի իմ աշխատանքային գործունեությունը վերականգնողական կենտրոնում՝ որպես լոգոպեդ:

Մինչ այս պահը չի եղել գեթ մեկ երեխա, որն ունենալով խոսքային խանգարում և չունենալով հնարավորություն, դիմելով ինձ, մնա իմ կողմից առանց մասնագիտական աջակցության: Ինձ համար շատ կարևոր է նաև ծնողներին մասնագիտական գիտելիքներով զինելը, լոգոպեդական շտկման գործընթացին ներգրավելը, աջակցելը և՛ որպես մասնագետ, և՛ որպես մարդ: Իրազեկ և համագործակցող ծնողը ճիշտ, արդյունավետ ու նպատակային աշխատանքի կարևոր գրավականներից է:

Ես ինձ երջանիկ եմ համարում նաև նրա համար, որ Մանկավարժական համալսարանում ուսումնառությանս տարիներին մեզ դասավանդել են հանրապետության լավագույն մասնագետները՝ ի դեմս գիտական ղեկավարիս՝ Գոհար Հովյանի: Համալսարանն ավարտեցի գերազանցությամբ, ի ուրախություն ընտանիքիս անդամների՝ ծնողներիս, ամուսնուս և երկու երեխաներիս, ովքեր իրենց մեծ ներդրումն ունեն այս ամենի մեջ, շնորհակալ եմ նրանց, ինձ աջակցելու, վստահելու և համբերատարության համար: Հիրավի դժվարին էր այս ամենի հետ համատեղել ընտանիք, աշխատանք, բայց իմ փորձով եմ փաստում, որ անհնարին ոչինչ չկա, եթե կա երազանքին հասնելու մեծ ձգտում:

Այս տարիների ուսումնառությունը, սեմինարները, համագործակցությունները, ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները, ինչպես նաև աշխատանքային գործունեությունը հնարավորություն տվեցին կյանքի կոչել իմ այն մարդասիրական մղումները, որոնք միտված էին մեր հասարակության, ընտանիքների կյանքը դեպի ավելի լավը փոխելուն, երեխաներին՝ իրենց դժվարություններում օգնելուն, կրթական միջավայրում հեշտ հարմարեցմանը, իսկ ծնողին ժպիտ ու հույս պարգևելուն:

Այս ամենից մասնագետն է իրեն առավել երջանիկ զգում, հավատացած եմ: Սա իմ առաքելությունն է: Դրականի մասին խոսելիս պետք է նշեմ, որ այս տարիների ընթացքում շատ է փոխվել նաև իմ ներաշխարհը. ձեռք եմ բերել ավելի բարձր կամային, սեփական անձն ու դիմացինին ավելի լավ հասկանալու հատկանիշներ:

Հետագայի իմ տեսլականում էլի երեխաներն են, նաև այն մեծերը, ովքեր կունենան իմ մասնագիտական օգնության կարիքը: Երբեք չեմ դադարի սիրահարված մնալ մարդասիրական իմ մղումներին: Կարևոր այս մասնագիտական ուղին դեռ զարգացման ընթացքի մեջ է, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ ինձ համար: Նպատակներիս մասին շատ խոսել չեմ ուզում, Աստված առաջ, բայց այն, որ կունենամ իմ գունեղ ու էներգիայով լի աշխարհը, այն բազում երեխաների անմեղ դեմքերով, ովքեր արդեն հաղթահարած կլինեն իրենց խոսքային խնդիրները և ոչ միան խոսքային՝ դա հաստատ է:

Լիահույս եմ, որ բոլոր նրանք, ովքեր կընտրեն այս մարդասիրական մասնագիտությունը, քաջ կգիտակցեն նրա պահանջներն ու կարևորությունը:

Այժմ ԵՊԲՀ ուսանող եմ, սովորում եմ «Առողջապահության կազմակերպում և կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրում, որով, սակայն, հրաժեշտ չեմ տալիս Մանկավարժական համալսարանին և ինձ հարազատ դարձած պրոֆեսորադասխոսական անձնակազմին:

Ի գործ...

Շնորհակալ եմ:

Միլենա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. Բանասիրական ֆակուլտետ

Մանկավարժը պետք է միշտ առաջ նայի

Կրթությունը անհատի, հասարակության և պետության շահերից բխող ուսուցման և դաստիարակության միասնական գործընթաց է, որը նպատակաուղղված է հայ ժողովրդի և մարդկության հոգևոր ժառանգությունը, գիտելիքներն ու փորձը յուրացնելուն, պահպանելուն, հարստացնելուն ու սերունդներին փոխանցելուն:

Ազգապահպանության և հայրենասիրության հիմքը լեզուն ու գրականությունն է:

Գիտակցելով այս ամենը՝ ընտրել եմ հայոց լեզվի և գրականության ուսուցչի մասնագիտությունը, որպեսզի իմ գիտելիքներն ու հմտությունները փոխանցեմ ապագա սերնդին:

Ես արդեն ավարտել եմ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետը և ստացել գերազանցության դիպլոմ:

Սովորելու ընթացքում հանդիպել եմ դժվարությունների, որոնք բոլորն էլ հաղթահարելի են եղել, քանի որ մեր կողքին մշտապես ներկա են եղել հանրապետության լավագույն մասնագետները: Նրանք մեզ մղել են սիրելու հայոց լեզուն և գրականությունը, ապրելու լեզվով և գրականությամբ, գնահատելու մեր ժողովրդի դարավոր անցյալը:

Ես կատարել եմ իմ մանկության երազանքը՝ դառնալով հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: Հասել եմ հաջողության, բայց հաջողության հասնելու համար պետք է պայքարել: Եթե չկա պայքար, ապա չկա հաջողություն:

Այժմ ընդունվել եմ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության մագիստրոսական կրթական ծրագրի անվճար համակարգի առաջին կուրս: Վստահ եմ, որ մագիստրոսական ծրագիրն ինձ համար կբացի նոր հորիզոններ:

Մանկավարժի գլխավոր հատկանիշներից մեկը պետք է լինի անդադար ինքնակրթվելու, հետազոտելու, նորը հայթայթելու կարողությունը: Անկախ տարիքից, կոչումից ու զբաղեցրած պաշտոնից՝ մարդը պետք է ձգտի դեպի նորը, կատարելագործվածն ու արդիականը:

Մանկավարժը պետք է միշտ առաջ նայի ու նույնը սովորեցնի իր աշակերտներին:

Անի ՆԱՄԵՍՆԻԿՅԱՆ
Գեղարվեստական կրթության ֆակուլտետ

Ինձ համար մանկավարժի կերպարը մշտապես եղել է օրինակելի

Բոլորիս կյանքում հասունանում է մի պահ, երբ պետք է ընտրենք որևէ մասնագիտություն, որն ուղեկից է լինելու ողջ կյանքի ընթացքում: Մանկավարժությունն ունի դարավոր պատմություն, այն հնագույն մասնագիտությունների շարքում է:

Ինձ համար մանկավարժի կերպարը մշտապես եղել է օրինակելի, իսկ երաժշտությունը՝ հնչյունների զարմանահրաշ աշխարհը, բացահայտումների անսպառ օվկիանոս:

Ընտրել եմ երաժիշտ-մանկավարժի մասնագիտությունը, որովհետև կարծում եմ, որ մանկավարժներն ազգի հրեշտակներն են, ովքեր իրենց նվիրյալ գործն են անում մատաղ սերնդի կրթության և դաստիարակման կարևոր գործում, իսկ երաժիշտ-մանկավարժի հիմնական խնդիրն է կարողանալ տանել կյանքի և երաժշտության միջև համապատասխան գծեր, քանի որ երաժշտությունը համարվում է կյանքի հայելին ու արտացոլանքը:

Ուսանողական տարիների ցանկացած դժվարություն և հիասթափություն հաղթահարելի է, այո՛, եթե կա մեծ ցանկություն և, իհարկե, նպատակ, իսկ դրանց հաղթահարման ճանապարհը լի է հաճելի փորձություններով:

Ուսանողական տարիների հաջողություններն ու ձեռքբերումները պայմանավորված են մասնագիտական գիտելիքներով (և ոչ միայն) և մանկավարժական կոմպետենտությամբ, որի համար իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական կազմին, մասնավորապես՝ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի, Երաժշտության մանկավարժության ամբիոնին և ինձ աջակցող մարդկանց, ովքեր իրենց նվիրական աշխատանքով նպաստեցին իմ՝ որպես կոմպետենտ մանկավարժի ձևավորմանը: Բացի մանկավարժական բարձրագույն որակներից, ուսանողական տարիների լուրջ ձեռքբերում են նաև դասախոսներս, ընկերներս: Նրանց միջավայրում ես ավելի շատ գնահատեցի իմ ընտրած մասնագիտությունը և նվիրվեցի վերջինիս: Ես կարևորում եմ այն տեսակետը, որ, եթե մանկավարժ ես, ապա սովորեցնելուց բացի, ինքդ պետք է պատրաստ լինես սովորելու և ինքնակրթվելու, քանի որ դիմացդ կանգնած է մատաղ սերունդ, որը ևս ունի իր մտահղացումներն ու կարծիքն արտահայտելու իրավունքը: Ուրեմն, մեր ամբողջ ներուժով պետք է նվիրվենք և լծվենք մեր աշխատանքին:

Սոնա ԱՍՊԱՏՈՒՐՅԱՆ
Օտար լեզուների ֆակուլտետ

Սովորել ու ձգտել միշտ լավագույնը լինել

Ողջույն, սիրելի՛ ընթերցող, ես Սոնա Ասպատուրյանն եմ՝ Օտար լեզուների ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի 2023-2024 ուստարվա բակալավրի գերազանց շրջանավարտ:

Ծնվել եմ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում: Ստանալով 9-ամյա կրթություն, որոշեցի շարունակել ուսումս Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջում: «Գործավարություն՝ օտար լեզուների խորացված իմացությամբ» որակավորմամբ գերազանց ավարտեցի քոլեջը, և դեռևս 4 տարի առաջ էր, երբ հստակ նպատակ դրեցի իմ առջև՝ ստանալ բարձրագույն կրթություն և երբեք չդադարել կրթվել: Որոշել էի՝ ինչ էլ լինի, պետք է լեզուներ ուսումնասիրեմ և հաստատապես շարունակեմ ուսումս՝ դառնալով օտար լեզվի մասնագետ: Ընդունելության տարին վառ է տպավորված հիշողությանս մեջ, դե այն համընկավ կորոնավիրուսային համավարակի ի հայտ գալու հետ, անորոշ էր ամեն բան՝ ի՞նչ քննություններ էինք հանձնելու, ե՞րբ էին սկսվելու դասերը, արդյո՞ք կհաջողվեր համալսարան գնալ, թե՞ այդպես էլ ամեն բան առցանց տիրույթում կընթանար: Ոչինչ պարզ չէր, սակայն անկախ ամեն ինչից, պետք էր քայլեր ձեռնարկել:

Ելնելով ֆինանսական և ընտանեկան դժվարություններից՝ ես չկարողացա գնալ ընդունելության համար պարապմունքների և ինձ մնում էր միայն հույսը դնել ինքս ինձ վրա, չգիտեմ էլ՝ ասեմ բարեբախտաբա՞ր, թե՞ ցավոք, բայց պարզվեց, որ ընդունվելու ենք՝ հանձնելով միայն մեկ քննություն, այն էլ՝ անգլերեն: Ես սկսեցի ինքնուրույն պարապել շտեմարաններով, ունեի մոտավորապես մեկ ամիս և անգլերենի բազային գիտելիք, այլ կերպ ասած ունեի լեզվի իմացության սկսնակ մակարդակ: Քննասենյակում նստած հպարտ ու ամենագետի կեցվածքով, բայց սրտումս՝ տագնապ, ես հանձնեցի քննությունը, մտքումս միայն մեկ բան էր, եթե չհաջողեմ, քոլեջի դիպլոմով հեռակա համակարգում կշարունակեմ ուսումս, բարդ, բայց և հաղթահարելի տարի էր: Հավաքելով ոչ այնքան բարձր միավոր՝ ես ընդունվեցի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Օտար լեզուների ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» բաժին:

Երբեք չեմ էլ պատկերացրել, որ կստանամ մի որակավորում, որից միշտ խուսափել եմ, բայց ինչպես ասում են. «Ոչինչ հենց այնպես չի լինում»:

Առաջին օրերը համալսարանում ինձ համար գրեթե չէին անցնում, իսկական մոլորություն էր, բայց միաժամանակ զգում էի՝ ես ճիշտ տեղում եմ, աստիճանաբար գիտակցեցի, որ ես դառնալու եմ այն մարդը, ով պետք է կրթի և դաստիարակի սերունդներ, ումից պետք է սովորեն, ով պետք է օրինակ լինի շատերի համար, ումից կախված կլինի կիրթ հասարակություն ունենալու ձգտումը, և այդտեղից էլ սկսվեց իմ մեծ սերը դեպի Մանկավարժական համալսարանը: Աշխատասիրությունն ու նպատակասլացությունն ինձ օգնեցին և ես բարձր առաջադիմության շնորհիվ 3 տարի սովորեցի անվճար համակարգում, ուսանողական տարիներն էլ ավելի գեղեցիկ դարձան Ուսանողական խորհրդի հետ, ես դարձա Ուսանողական խորհրդի ընտանիքի մի մասնիկը: Որպես ակտիվ ուսանող՝ ինձ տրվեց Օտար լեզուների ֆակուլտետի սոցիալական հանձնաժողովի պատասխանատու լինելու հնարավորությունը. այս տարիներն իմ մեծագույն ձեռքբերումն է՝ բոլոր առումներով:

Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի շնորհիվ ես բազմաթիվ հաջողություններ եմ գրանցել և միանշանակ շարունակելու եմ ավելին վերցնել, սովորել ու ձգտել միշտ լավագույնը լինել: Հերթը հասել է մագիստրատուրային. օրեր առաջ էր, երբ տեղեկացա, որ մագիստրոսի կրթական ծրագրով անվճար ուսուցմամբ ընդունված դիմորդ եմ իմ սրտի համալսարանում: Ես հպարտ եմ, որ Աբովյանական եմ, գիտակցում եմ մանկավարժի կոչման պատասխանատվությունը և երախտապարտ եմ ինձ հավատացող, օգնող ու օրինակ ծառայող դասախոսներին, մարդկանց, ովքեր կողքիս են եղել այս 4 տարիների ընթացքում, շնորհակալ եմ բոլորին: Հիմա վստահաբար ասում եմ՝ իմ սեր Մանկավարժականն ինձ տվել է արժեքներ, գիտելիք, մարդիկ, հաճելի հիշողություններ, մոտիվացիա, և դրական օրեր:

Պատիվ ունեմ, որ Աբովյանական եմ:

Սյուզաննա ԽԱՌԱՏՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետ

Լրագրությունը ոչ միայն մասնագիտություն է, այլև պատասխանատվություն

Դպրոցական տարիքում, երբ մտածում էի ապագա մասնագիտության մասին, ես գիտակցում էի, որ լրագրությունն ինձ համար ոչ միայն հետաքրքիր, այլ նաև արժեքավոր ոլորտ է, որտեղ կարող եմ ներկայացնել իրականությունը և ազդել հասարակության վրա: Իմ ընտրությունը՝ սովորելու Հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) լրագրության բաժնում, հիմնված էր մի շարք կարևոր պատճառների վրա: Նախ, ՀՊՄՀ-ն հայտնի է իր բարձր որակի կրթությամբ և փորձառու դասախոսներով: Ես գիտեի, որ այստեղ սովորելով, կստանամ անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ՝ պրոֆեսիոնալ լրագրող դառնալու համար: Համալսարանի դասախոսական կազմն ունի մեծ փորձ և լայն կապեր մեդիա ոլորտում, ինչը հնարավորություն կտար ինձ՝ սովորելու լավագույններից: Երկրորդ, համալսարանն առաջարկում է ուսուցման նորարարական մեթոդներ և տեխնոլոգիաներ, որոնք համահունչ են ժամանակակից լրագրության պահանջներին: Այս կրթական հաստատությունը մշտապես թարմացնում է իր ուսումնական ծրագրերը՝ դրանք համապատասխեցնելով ուսանողների կարիքներին և ժամանակի պահանջներին: Երրորդ, լրագրության բաժինը ՀՊՄՀ-ում տրամադրում է հնարավորություն՝ բազմապիսի պրակտիկաների անցկացման և փորձառության ձեռքբերման, իսկ դրանք անհրաժեշտ են գործնական հմտությունների զարգացման և աշխատաշուկայում մրցունակ լինելու համար: Ես համոզված էի, որ հենց այստեղ կստանամ այն փորձը, որն անհրաժեշտ է գործնական կյանքում հաջողության հասնելու համար: Բացի այդ, համալսարանի շրջանավարտները հաճախ են ունենում հաջող կարիերա՝ աշխատելով տարբեր մեդիա ընկերություններում և կազմակերպություններում: Այս հանգամանքը ևս կարևոր գործոն էր իմ ընտրության համար, քանի որ ես ցանկանում էի ապագա մասնագիտության մեջ ունենալ կայուն կարիերային աճ:

Ավարտեցի ուսումնառությունս Հայկական պետական մանկավարժական համալսարանում: Հիմա վստահ կարող եմ ասել. ուսանողական կյանքը կտրուկ փոխել է ինձ: Բազմաթիվ հիշողություններով այս ճանապարհը, ընթացքը անխուսափելիորեն բերում է փոխակերպումների, որոնք անհնար է անտեսել: Համալսարան մտնելուց առաջ ես ունեի միայն ընդհանուր պատկերացումներ լրագրության մասին, բայց իրականում պարզ չէր, թե ինչպես կդասավորվի իմ ապագան այս ոլորտում: Մինչև բուհ գալը, ես լի էի հետաքրքրասիրությամբ և ցանկությամբ՝ իմանալու ավելին: Կարդում էի հոդվածներ, նայում նորություններ և փորձում հասկանալ՝ ինչ է նշանակում լինել լրագրող: Բայց իմ գիտելիքները սահմանափակ էին, և ես հաճախ չգիտեի՝ ինչ ուղղությամբ շարժվել: Պրակտիկ հմտություններ ձեռք բերելու հնարավորությունն քիչ ունեի, և այն, ինչ գիտեի, հիմնականում տեսական բնույթ ուներ: Չնայած իմ մեծ ցանկությանը՝ դառնալ լրագրող, ես մի փոքր անհանգստացած էի, թե ինչպես կկարողանամ հասնել իմ նպատակին: ՀՊՄՀ-ն ամբողջությամբ փոխեց իմ կյանքը և աշխարհայացքը: Համալսարանի տարիները տվեցին ինձ ոչ միայն գիտելիքներ, այլ նաև փորձառություն և վստահություն: Ես ձեռք բերեցի այն պրակտիկ հմտությունները, որոնք կարևոր են լրագրողի համար: Աշխատելով տարբեր մեդիանախագծերի վրա և մասնակցելով պրակտիկաներին՝ սովորեցի ինչպես գրել հստակ ու գրավիչ հոդվածներ, վարել հարցազրույցներ և կազմակերպել լրագրողական հետազոտություններ: Համալսարանում ես հասկացա, որ լրագրությունը ոչ միայն մասնագիտություն է, այլ նաև պատասխանատվություն՝ հասարակության առաջ: Այս ընթացքում ես ձեռք բերեցի ընկերներ, որոնք դարձան իմ կյանքի անբաժան մասը: Մենք միասին անցանք ինչպես հաջողություններով, այնպես էլ դժվարություններով լի ճանապարհ: Համալսարանից ես դուրս եմ գալիս ոչ միայն որպես ավելի պատրաստված և փորձառու մասնագետ, այլ նաև որպես ավելի ինքնավստահ և նպատակասլաց անհատ: Ես այժմ հստակ պատկերացում ունեմ իմ նպատակների մասին և գիտեմ, թե ինչպես հասնել դրանց իրականացմանը: Հեռանում եմ գոհունակությամբ, շնորհակալությամբ և մեծ սպասումներով դեպի ապագա: Այժմ պատրաստ եմ դիմագրավել ցանկացած մարտահրավերի, որը կարող է հանդիպել իմ ճանապարհին:

Մնաս բարով, Մանկավարժական համալսարան, ես շնորհակալ եմ քեզ:

Նելլի ՊԵՏՐՈՍՅԱՆ
Սկզբնական կրթության ֆակուլտետ

Ես դեռ վերադառնալու եմ քո տաքուկ և հուսալի գիրկը...

Ողջո՛ւյն, ես Նելլի Պետրոսյանն եմ, ՀՊՄՀ շրջանավարտ, նախադպրոցական մանկավարժ և երկու գեղեցկուհի աղջիկների երջանիկ մայրիկ: 2020 թ. ընդունվել եմ ՀՊՄՀ Սկզբնական կրթության ֆակուլտետի Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկայի բաժին, իսկ արդեն 2024 թ. դարձել եմ իմ հարազատ համալսարանի շրջանավարտը՝ գերազանց առաջադիմությամբ: Ավարտելուց հետո ընդունվել եմ մագիստրատուրա՝ շարունակելու կրթությունս նույն բաժնում:

Ուսումնառության տարիներին հանդիպել եմ բազմաթիվ խոչընդոտների ու դժվարությունների, սակայն պատվով և մեծագույն համբերատարությամբ հաղթահարել եմ դրանք: Գրանցել եմ բազում հաջողություններ, որոնց համար երախտապարտ եմ այն բոլոր մարդկանց, ովքեր մշտապես եղել են կողքիս, վստահել են ինձ ու հավատացել իմ ուժերին: ՀՊՄՀ-ն ինձ համար բացել է բազում հաջողությունների դռներ, որոնց հասնելու մեծագույն երազանքը եկել է դեռ մանկության տարիներից: Համալսարանի պատերը տեսնել ներսի կողմից, դառնալ մանկավարժ, ստեղծել և ստեղծագործել...

Իսկ ամենակարևորն այն է, որ ՀՊՄՀ-ն տվեց հնարավորություն՝ իրագործելու մայրիկիս, այդպես էլ չտեսած, սակայն իրականություն դարձած ցանկությունը. ինձ ուսանողի կարգավիճակում տեսնելը...

Ինձ համարում եմ մասնագիտությանս կրողը, քանի որ այս բաժինն ընտրել եմ բավականին հասուն տարիքում, հստակ գիտակցելով, թե ուր եմ գնում և ինչի համար: Կարծում եմ՝ չկա աշխարհում մեկ այլ մասնագիտություն, որն այնչափ հոգեհարազատ ու սրտիս մոտ կլիներ, ինչպիսին որ նախադպրոցական մանկավարժությունն է: Երեխաները, հատկապես նախադպրոցական տարիքում գտնվողները, օգնում են ինձ կտրվել աշխարհի հոգսերից, վանում ինձանից ամեն բացասական երևույթ: Նրանք իմ ուժն ու իմ թուլությունն են, այդ իսկ պատճառով ընտրել եմ հենց այս մասնագիտությունը:

Բնույթով ստեղծագործ եմ, ինչը ևս անմիջական կապ ունի նախադպրոցական մանկավարժության հետ: Ունեմ մի շարք հեղինակային հեքիաթներ, որոնցից երկուսը՝ «Զատիկը» և «Ծիրանենին» տպագրվել են ՀՊՄՀ պաշտոնաթերթում, ինչի առիթով բավական հպարտ եմ, քանի որ հեքիաթներս տպագրված տեսնելը նույնպես անհիրական թվացող երազանքների շարքից էր...

Ասելիքս շատ է, սակայն միշտ չէ, որ բառերը բավական են՝ ներկայացնելու այն ամենն, ինչը զգացել ու տեսել եմ ուսանողական տարիներին: Պարզապես կասեմ, որ շնորհակալ եմ քեզ, իմ հարազատ համալսարան, ես դեռ վերադառնալու եմ քո տաքուկ և հուսալի գիրկը...

Իմ սիրելի ապագա ուսանող, արի՛ ՀՊՄՀ, արի՛ քո երազանքի հետևից...

Ռաիսա ԳՐԻԳՈՐՅԱՆ
Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետ

Գնում եմ մագիստրոսի պատվավոր կոչման հեռևից

Բոլորիս կյանքում էլ գալիս է այն պահը, երբ սկսում ենք մտածել մեր ապագա մասնագիտության մասին: Ինձ համար շատ բարդ է եղել մասնագիտության ընտրությունը, քանի որ այն պահանջում է մեծ պատասխանատվություն: Դպրոցում սիրելով մաթեմատիկայի ուսուցչուհուն և գնահատելով նրա անձնվեր աշխատանքն ու անսպառ նվիրումը՝ ընտրեցի մաթեմատիկայի ուսուցչի մասնագիտությունը: Իսկ որտե՞ղ կարող էի դառնալ պրոֆեսիոնալ մանկավարժ, եթե ոչ Մանկավարժական համալսարանի Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի մաթեմատիկայի բաժնում: Ես կարծում եմ, որ մատաղ սերնդին դաստիարակելն ու հասարակության համար արժանապատիվ մարդ ձևավորելը պատվաբեր աշխատանք է: Մեր հասարակությունը մեծ ակնածանքով և խոնարհումով է վերաբերվում ուսուցիչներին, նրանց կատարած աշխատանքին, փորձառությանը, խորհուրդներին:

Սիրելով մանկավարժի մասնագիտությունը և մաթեմատիկան, ընդունվեցի ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի մաթեմատիկայի բաժին՝ անվճար համակարգով: Գերազանց սովորելն ինձ համար հաճելի էր և պատասխանատու: Բակալավրում սովորելու տարիներին առանձնակի դժվարություններ չեմ ունեցել և իմ ուսանողական տարիներն անցել են շատ հետաքրքիր: Այդ 4 տարիների ընթացքում ձեռք եմ բերել մասնագիտական խոր, համապարփակ գիտելիքներ, գործնական հմտություններ ու կարողություններ: Մանկավարժական պրակտիկաների ժամանակ փորձել եմ գործնականում լիարժեքորեն կիրառել այն ամենը, ինչ ձեռք եմ բերել մասնագիտությունից, հոգեբանությունից, մանկավարժությունից: Պրակտիկան իմ մեջ ամրապնդեց մանկավարժ դառնալու իմ ձգտումը և նպաստեց նրան, որ ես միանշանակ գնալու եմ դպրոց աշխատելու և մատաղ սերնդին կրթելու և դաստիարակելու:

Ես անչափ ուրախ եմ և հպարտ, որ ավարտել եմ բակալավրիատը գերազանցությամբ, և ինձ համար մեծ պատիվ է, որ իմ ավարտական վկայականն ինձ հանձնել են հանդիսավոր պայմաններում: Այս ամենը պարտավորեցնող է և ինձ մղում է նոր նվաճումների և բարձունքների:

Համալսարանական չորսամյա տարիներն իմ հույսի ու լույսի, նոր կյանքի և ձեռքբերումների, ինքնաճանաչման և ինքնադրսևորման տարիներն էին: Իմ մասնագիտությունը սիրելուն նպաստել է մեր համալսարանի մեգապրոֆեսիոնալ պրոֆեսորադասախոսական անձնակազմը, որին ես երախտապարտ եմ ինձ ծով գիտելիքներ փոխանցելու համար: Մինչև դասախոս լինելը նրանք մեզ համար եղել են ավագ ընկեր՝ յուրաքանչյուր վայրկյան պատրաստ օգնելու մեզ:

Ի վերջո պետք է հիշել մի բան՝ ամուր երկրի հիմքը կրթությունն է, իսկ դա ապահովող օղակը մանկավարժները:

Գերազանց ավարտելով բակալավրիատը՝ ուզում եմ հատուկ շնորհակալություն հայտնել Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի բոլոր դասախոսներին՝ ի դեմս ավարտական աշխատանքիս գիտական ղեկավար Աղավնի Գրիգորյանի՝ իր նվիրյալ և անշահախնդիր աշխատանքի համար:

Ստանալով մանկավարժի բաղձալի որակավորում՝ գնում եմ մագիստրոսի պատվավոր կոչման հետևից:

Վիկտորյա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Օտար լեզուների ֆակուլտետ

Համալսարանական կրթությունն իմ առջև բացեց նոր դռներ

Դեռ մանուկ ժամանակ լսել էի մի հետաքրքիր արտահայտություն՝ «Աշխարհում կա 3 սուրբ մասնագիտություն՝ դատելը, կրթելը և բուժելը»: Հենց այդ ժամանակ ես հասկացա, որ իմ առաքելությունը կրթելն է, քանի որ փոքր տարիքից սկսած սիրում էի «դպրոց-դպրոց» խաղալ:

Երբ սովորում էի 8-րդ դասարանում՝ հասկացա, որ ռուսաց լեզուն և ռուս գրականությունը իմ տարերքն են, իսկ մանկուց ռուսերենին տիրապետելը և ռուսական կրթություն ունենալը ավելի շատ նպաստեցին այդ որոշումն ընդունելուն:

2020-ի ամռանն ընդունվեցի ՀՊՄՀ՝ գերազանց միավորներով: Շատ մեծ ակնկալիքներ ունեի համալսարանից, կրթությունից և ուսանողական կյանքից: Եվ ասեմ, որ դրանք արդարացան: Համալսարանական տարիները լավագույնն էին: Հասել եմ բազում հաջողությունների՝ մասնակցել եմ մի շարք սեմինարների, հաղթել եմ մի շարք մրցույթներում, աշխատել եմ որպես կամավոր, ստացել եմ Մոսկվայի քաղաքապետի կրթաթոշակ և այլն: Նշեմ, որ այդ ամենը զուգահեռ նրան, որ 4 տարի սովորել եմ գերազանց առաջադիմությամբ և ավարտել գերազանցության դիպլոմով, իսկ 2-րդ կուրսից աշխատել եմ իմ մասնագիտությամբ: Իհարկե, ճանապարհիս հանդիպել եմ բազում դժվարությունների, բայց վստահ եմ, եթե ունես նպատակ և ցանկություն, կանես ամեն բան քո նպատակին հասնելու համար և ոչինչ չի կարող արգելք հանդիսանալ:

Այժմ կրթությունս շարունակում եմ նույն բաժնի մագիստրատուրայում: Ես վստահ եմ, որ լավ մանկավարժ դառնալու համար պետք է երբեք չդադարել կրթվել և ինքնակրթվել, միշտ շարժվել առաջ և ստանալ նոր գիտելիքներ: Համալսարանական կրթությունն իմ առջև բացեց նոր դռներ և նոր հնարավորություններ:

Սիդա ՆԱՆՈՒՇՅԱՆ
Սկզբնական կրթության ֆակուլտետ

Գիտելիքը զրահ է բոլոր դժվարությունների դեմ

Մասնագիտության ընտրությունը կյանքի ամենապատասխանատու և որոշիչ քայլերից մեկն է, որը չափազանց կարևոր է մարդու համար, քանզի դրանով է պայմանավորված աշխատանքային գործունեության որակն ու մակարդակը, սոցիալական կարգավիճակն ու բարեկեցությունը, ինչպես նաև բարոյահոգեբանական վիճակը:

Մենք գիտենք, որ առանց ներկա չի կարող լինել ապագա: Իսկ ապագայի մասին մեր պատկերացումներն իրականացնելու համար հարկավոր է զինվել գիտելիքով, քանզի այն զրահ է բոլոր դժվարությունների դեմ և հնարավորություն է տալիս կերտել ապագայի մեր տեսլականը:

Երկու տարի առաջ ես որոշեցի ընդունվել ՀՊՄՀ և երկրորդ անգամ ընտրեցի մանկավարժի մասնագիտությունը՝ հստակ գիտակցելով դրա կարևորության, ինչպես նաև դժվարության մասին, քանի որ այն միայն մասնագիտություն չէ, միայն աշխատանք չէ, այն անմնացորդ և անսահման սեր է պահանջում: Մանկավարժը կամուրջ է գիտության և նոր ձևավորվող անհատի միջև: Երեխաների հետ աշխատանքը նրբանկատություն, հանդուրժողականություն է պահանջում, քանի որ երեխան իսկապես արժեք է:

Չեմ կարող չնշել, որ երկու տարվա ընթացքում բազմաթիվ հույզեր, զգացողություններ, ուրախ և տխուր ակնթարթներ, վերելքներ և վայրէջքներ եմ ունեցել, բախվել մի շարք դժվարությունների, որոնք, երբեմն, անհաղթահարելի են թվացել: Սակայն բազմաթիվ խոչընդոտներ հաղթահարվել են համալսարանի պրոֆեսորադասախոսական հրաշալի անձնակազմի շնորհիվ: Լինելով մարդկային բարձր արժեքների կրողը՝ նրանք նույնը սերմանում են նաև իրենց ուսանողների մեջ:

Հայկական պետական մանկավարժական համալսարանը տալիս է գիտելիքահեն կրթություն, որի շնորհիվ ձևավորվում են կարողունակություններ, որոնք ապագա մանկավարժին օգնում են դիմակայել կրթության նոր մարտահրավերներին: Այս կրթության շնորհիվ հասկացել եմ, որ մանկավարժը պետք է ունենա ռեֆլեքսիվ կարողություններ, անընդհատ ինքնակրթվի և ինքնազարգանա, ապրումակցի, ունենա համագործակցելու, տեղեկատվական դաշտում արագ կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողության կարողություն, որոնք մասնագիտական աճի և մրցունակ լինելու գրավականն են:

Իմ սիրելի դասախոսների շնորհիվ ես վերաիմաստավորեցի և վերարժևորեցի գիտելիքն ու կրթությունը և հասկացա, որ կրթությունը շարունակություն է սիրում, քանի որ յուրաքանչյուր ժամանակահատված իր հետ բերում է նոր մարտահրավերներ՝ պահանջելով նոր ռազմավարական մոտեցումներ: Մանկավարժն է ապագա կերտողը, նա պետք է ձգտի ավելիին և լինի լավագույններից…

Ամեն բանի վերջը մի նոր բանի սկիզբն է: Այս կրթությունն իմ առջև նոր դռներ է բացելու, որոնք մասնագիտական նվաճումների սկիզբ են խոստանում…

Ժենյա ՊՈՂՈՍՅԱՆ
Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետ

Երբեք ուշ չէ

Ես Ժենյա Պողոսյանն եմ: Առաջին բարձրագույն կրթությունս ստացել եմ Հայաստանի պետական ագրարային համալսարանում: Այն ավարտել եմ գերազանցությամբ: Բուհն ավարտելուց հետո, ընտանեկան կարգավիճակով պայմանավորված՝ շուրջ 16 տարի եղել եմ տնային տնտեսուհի և զբաղվել եմ դուստրերիս խնամքով ու դաստիարակությամբ: Միշտ ցանկացել եմ աշխատել դպրոցում՝ որպես ուսուցչուհի, և ահա երեխաներս մեծ են, ունեմ որոշակի ժամանակ, որ կարող եմ ինձ տրամադրել, սակայն չունենալով մանկավարժի կրթություն, իհարկե, չէի կարող դպրոցում աշխատանք գտնել:

Փորձեցի աշխատանք գտնել Ագրարային համալսարանում, սակայն առաջարկն եղավ Արարատի մարզի քոլեջից, որն ինձ այնքան էլ հարմար չէր: Եվ ահա ամուսնուս հորդորով ընդունվեցի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի Կենսաբանության բաժնի մագիստրատուրա՝ հետագայում դպրոցում աշխատելու նպատակով:

Դժվարությունները սկսվեցին հենց ուսումնառության առաջին շաբաթից, քանի որ կրթական համակարգը բավականին փոփոխվել է և անհրաժեշտ էր պատրաստել սահիկներ, որն ինձ համար նորություն էր: Սակայն ՏՀՏ-ի դասընթացներին կարողացա տիրապետել համակարգչային այն ծրագրերին, որոնք օգնելու էին ուսման գործընթացին հետագա 2 տարիների ընթացքում:

Ժամանակի ընթացքում հարմարվեցի կրթական նոր ծրագրերին, և կարծես ամեն բան իր հունով ընթացավ: Առաջին տարին սովորել եմ վճարովի հիմունքներով, սակայն լավ առաջադիմության շնորհիվ 2-րդ տարում անցա անվճար ուսուցման: Մագիստրոսական թեզի համար պարոն Պիպոյանի կողմից առաջարկ եղավ աշխատել «Սևանա լճի ձկնաշխարհը» թեմայի շրջանակներում, սակայն հասկացա, որ չեմ կարողանալու պատշաճ կատարել աշխատանքս և նախընտրեցի աշխատել Աղստև գետի ձկնաշխարհի ուսումնասիրությամբ, քանի որ այն այնքան էլ լավ ուսումնասիրված չէր, և ես էլ հաճախ եմ լինում Տավուշի մարզում: Առաջարկս ողջունվեց ղեկավարիս կողմից: Որոշեցինք թեման հաստատել՝ որպես «Աղստև գետի ժամանակակից ձկների տեսակային կազմը և ձևակենսաբանական առանձնահատկությունները»:

Մեծ հետաքրքրությամբ սկսեցինք աշխատել այդ ուղղությամբ, ունեցանք մեծ հաջողություններ և 2024 թվականի մարտի 29-ին «Լերկաձկների (Nemachelidae) և ծականայինների (Cobitidae) ֆաունան Աղստև գետում» զեկույցով հանդես եկա «Երիտասարդություն և գիտություն. հետազոտությունից մինչև արդյունավետ լուծումներ» միջբուհական գիտաժողովին:

Ուսումնառության ընթացքում աշխատելու առաջարկ ստացա Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի «Կենդանիների փորձարարական լաբորատորիա»-յում՝ որպես ավագ լաբորանտ: Աշխատանքս բավականին հետաքրքիր է և մեծ սիրով աշխատում եմ այդ ոլորտում:

Մանկավարժական համալսարանն ավարտեցի գերազանցությամբ, ինչն ինձ համար ևս մեկ ձեռքբերում էր: Ցանկություն ունեմ շարունակելու կրթությունս և հենց Աղստև գետի ձկնաշխարհի ուղղությամբ: Իմ շատ սիրելի ղեկավարի օգնությամբ և ղեկավարությամբ արդեն իսկ վերսկսում ենք ատենախոսության համար նախատեսված աշխատանքները:

Ամփոփելով Մանկավարժական համալսարանում ուսանած այս երկու տարիները, կարող եմ ասել, որ շրջադարձային եղան ինձ համար, իմ առջև բացվեցին նոր դռներ՝ տալով ինձ նոր հնարավորություններ, ինքս ինձ բացահայտելու նոր կողմերից, ձեռք բերեցի նոր ծանոթություններ, լավ ընկերներ: Բախտ ունեցա ճանաչելու կենսաբանական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Սամվել Պիպոյանին, ով դարձավ իմ գիտական թեզի ղեկավարը և ինձ հորդորեց էլ ավելի արժևորել գիտության ոլորտում կատարածս աշխատանքը:

Հորդորս բոլոր նրանց, ովքեր ունեն սովորելու, առաջ գնալու, նոր հորիզոններ բացահայտելու ցանկություն, ցանկացած տարիքում այդ ամենն իրագործելու համար երբեք ուշ չէ:

Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետ

Ցրեատություն և բարի գալուստ

Դեռևս փոքր հասակից բազմաթիվ հետաքրքրություններ ունեի: Երբ հարցնում էին, թե ինչ եմ դառնալու՝ ամեն անգամ տարբեր մասնագիտություններ էի թվարկում:

Առաջին մասնագիտությամբ նկարիչ, հագուստի մոդելավորող եմ: Գերազանցությամբ ավարտել եմ Ջարդարվեստի պետական ուսումնարանը: Երկար ժամանակ զբաղվել եմ գեղարվեստական մարմնամարզությամբ, նվագում եմ կիթառ և այլն: Բայց այս ամենի արդյունքում ընտրեցի, կամ մասնագիտությունս ընտրեց ինձ, և ես հայտվեցի թատրոնում: Քանի որ ռեժիսուրան համադրական և սինթետիկ արվեստ է, այստեղ կարող եմ մի քանի ունակություն մեկտեղել: Ինչպես գիտենք, ռեժիսուրայում ներդաշնակվում է գրականությունը՝ պիեսը, գեղանկարչությունը՝ բեմանկարչությունը, երաժշտությունը և այլն:

Համալսարանի ընտրության հարցում երկար չեմ մտածել, քանի որ գիտեի ոլորտի լավագույններն են դասավանդում ՀՊՄՀ-ում: Սովորելով էլբակյանների արվեստանոցում՝ հայտվեցի նաև Խամաճիկների թատրոնում: Ներգրավվելով «Գծից այն կողմ» ներկայացման մեջ, որպես ռեժիսորի օգնական, մեծ պատկերացում ունեցա, թե ինչպես է զրոյական կետից ստացվում ներկայացումը մինչև հանձնման փուլ, երբ արդեն հնչում են երկար սպասված ծափահարությունները:

Թատրոնը սիրում եմ անսահման, քանի որ կարող եմ ամեն օր ծնվել, ստեղծագործել և չձանձրանալ: Սիրում եմ փորձերի անվերջանալի թվացող ընթացքը, բեմադրել այն ամենը, ինչ թաքցված է ենթատեքստի տակ:

Վերադառնալով դեպի ավելի հետ՝ հիշում եմ, որ դպրոցում գերազանց չեմ սովորել: Ունեի նախընտրելի առարկաներ, որոնք հեշտ էին ստացվում և առավել հետաքրքիր էին հայոց լեզուն, գրականությունը, պատմությունը: Բայց երբ ընտրեցի մանկավարժական համալսարանը՝ ինքնաբերաբար ցանկացա լինել ուրիշ և արվեստը երեխաներին նորովի ներկայացնել: Ինտերակտիվ և խաղերի միջոցով շատ ավելի հետաքրքիր է ստացվում նյութի մատուցումը: Մանկավարժական համալսարանն ընտրելու ևս մեկ պատճառ էր հենց երեխաների հետ աշխատելու ցանկությունը: Երեխաների հետ աշխատելը որքան բարդ է, այնքան էլ զվարճալի: Քանի որ նրանց ուշադրությունը գրավելը, զարմացնելը, ընկերանալը բավականին դժվար է, դրա համար պետք է նաև լինես հոգեբան, կարողանաս որսալ մտքերը, իմանալ նրանց նախասիրությունները:

ՀՊՄՀ-ում ուսումնառությանս տարիները լի են եղել բազմաթիվ հիշողություններով և ձեռքբերումներով: Համալսարանում հաճախ աչքի էի ընկնում ակտիվությամբ և որակական հատկանիշներով. արդյունքում 2022 թ.-ին ընտրվեցի Կուլտուրայի ֆակուլտետի լավագույն ուսանող:

Որպես ավարտական աշխատանք բեմադրել եմ ամերիկյան դրամատուրգ Թենեսի Ուիլյամսի «Ենթակա է քանդման» պիեսը, որի առաջնախաղը տեղի է ունեցել Հովի. Թումանյանի անվան Ազգային տիկնիկային թատրոնում: Ներկայացումը դեռ կխաղացվի, քանի որ սիրվել է հանդիսատեսի կողմից: Սակայն կան նաև նոր բեմադրության մտքեր ևս:

Ցանկանում եմ ուսումս շարունակել Մանկավարժական համալսարանի նույն մասնագիտության՝մագիստրատուրայում:

Այսպիսով, չորս տարի անց գերազանցությամբ ավարտեցի ինձ հարազատ դարձած բուհը՝ նրան ասելով միևնույն ժամանակ և՛ ցտեսություն, և՛ բարի գալուստ:

Անի ԱՎԱԳՅԱՆ
Պատմության և հասարակագիտության ֆակուլտետ

Լավատեսությամբ և վճռականությամբ եմ նայում ապագային

Հայկական պետական մանկավարժական համալսարանում անցկացրած տարիները եղել են հիշարժան և խորապես փոխակերպող ճանապարհորդություն՝ նշանավորվելով ակադեմիական լուրջ մարտահրավերներով և անձնական աճով: Համալսարանի աշխույժ մթնոլորտը, դասախոսների նվիրվածության հետ միասին, ստեղծեց նպաստավոր միջավայր սովորելու և զարգանալու համար: Բազմաթիվ դասախոսությունների, սեմինարների և գործնական պարապմունքների միջոցով ես ձեռք բերեցի խորը պատկերացում ընտրածս մասնագիտության՝ հասարակագիտության մասին, կատարելագործեցի դասավանդման հմտություններս և զարգացրի հետաքրքրություններս կրթության նկատմամբ: Ուսանողների հետ ընկերությունն ու ծանոթությունները հարստացրին իմ փորձը՝ ապահովելով աջակցող միջավայր և մնայուն հիշողություններ:

Գերազանց ուսանող ճանաչվելը հոգիս լցնում է անսահման հպարտությամբ և երախտագիտությամբ: Այս գնահատանքը ոչ միայն իմ քրտնաջան աշխատանքի արտացոլումն է, այլև վկայությունն է ընտանիքիս և դասախոսական կազմի կողմից ստացած աջակցության և խրախուսանքի: Այն ամրապնդեց իմ հավատը հաստատակամության ուժի նկատմամբ և դրդեց ինձ շարունակաբար ձգտել գերազանցության:

Առաջ շարժվելով դեպի կյանքի հաջորդ փուլ՝ ակնկալիքներս անշուշտ մեծ են: Ես ցանկանում եմ կիրառել իմ ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները՝ կրթության ոլորտում բովանդակալից ազդեցություն ունենալու համար: Իմ առաջիկա ծրագրերը ներառում են մագիստրոսի կոչում ստանալը՝ հետագայում մասնագիտանալով հետաքրքրություններիս ոլորտում, միաժամանակ փնտրելով հնարավորություններ գործնական փորձ ձեռք բերելու դասավանդման և կրթական ծրագրերի միջոցով:

Առջևում բացվող ապագան և՛ հուզիչ է, և՛ մարտահրավերներով լի, բայց Հայկական պետական մանկավարժական համալսարանում կառուցած ամուր հիմքերով, վստահ եմ, որ կարող եմ հաղթահարել բոլոր դժվարությունները և օգտվել իմ ճանապարհին հանդիպող հնարավորություններից: Ես լավատեսությամբ և վճռականությամբ եմ նայում ապագային՝ պատրաստ դրական փոփոխություններ բերել կրթության աշխարհում:

Սոնա ԽԱՉԱՏՐՅԱՆ
Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ

Անհատի հաջողության բանալին կրթությունն է

Համալսարան ընդունվելու առաջին իսկ օրվանից, ինձ ծանոթ մարդիկ, ցավոք, նաև մանկավարժներ, իմանալով, որ ընդունվել եմ իմ սիրելի Հայկական պետական մանկավարժական համալսարան, ձայնի տոնայնությունը անհասկանալի կամ ինձ համար գոնե անընդունելի պատճառով փոխելով՝ հարցնում էին՝ առաջին հայտո՞վ ես ընդունվել, թե…

Ջերմորեն ժպտալով և ինձ համար կարծես ինչ-որ թանկ արժեք մատնանշելով՝ պատասխանում եմ. «Ոչ միայն առաջին, այլև միակ, կարևոր, մտածված և մեծ պատասխանատվություն ենթադրող հայտով ընտրել եմ հենց այս համալսարանը»:

Չգիտեմ՝ արդյո՞ք ճիշտ է ասել, որ ես եմ ընտրել համալսարանը. արդեն երկար ժամանակ հանգել եմ նրան, որ, իրականում, համալսարանն է ինձ ընտրել:

Իմ և համալսարանի կապն արդեն 7 տարվա պատմություն ունի: Այս կապը ձևավորվեց այն օրվանից, երբ պատահմամբ իմացա Մանկավարժական համալսարանի ավագ դպրոց-վարժարանի հոգեբանության բաժնի մասին: Անասելի ոգևորությամբ շտապեցի վարժարան, հետո արդեն ընդունվեցի և պատվով ավարտեցի իմ կյանքում իր կարևոր և անմոռանալի հետքն ու դրոշմը թողած վարժարանը:

Հենց վարժարանում ստացա այն կայուն հիմքերը և անհրաժեշտ գիտելիքները, որոնք ինձ պիտի ուղղորդեին դեպի համալսարան:

Իմ կյանքի բոլոր փուլերում համաձայնել եմ այն տեսակետի հետ, որ անհատի հաջողության բանալին կրթությունն է: Այսօր արդեն կհավելեմ, որ այն ոչ միայն անհատի, այլև պետության, ցանկացած հասարակության կայուն զարգացման հիմքն է, իսկ այդ հիմքերը դնողները կատարում են աշխարհում գոյություն ունեցող ամենանվիրական և ամենակարևոր աշխատանքը. նրանք կրթում և դաստիարակում են սերունդներ՝ արժանի սերունդներ: Նրանք մանկավարժներն են: Այն բոլոր նվաճումները, ձեռքբերումներն ու հաջողությունները, որոնք ունենում է մեր երկիրը, մեր սերունդը, մեր հասարակությունը մանկավարժի անվերապահ, սուրբ գործի արդյունքն են:

Այսօր արդեն գերազանցությամբ և 2023-2024 ուս.տարվա լավագույն շրջանավարտի կոչումով ավարտում եմ սիրելի համալսարանը: Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետում անցկացրածս 4 տարիները լավագույններից էին՝ լի հաջողություններով, մասնագիտական ձեռքբերումներով, որոնք, վստահաբար, շարունակական են լինելու: Այս ընթացքում համալսարանը հնարավորություն ընձեռեց մի շարք գիտական հոդվածներ հեղինակել, մասնակցել տարբեր գիտաժողովների, ծավալել մասնագիտական ակտիվ գործունեություն:

Գիտակցումը, որ նույն համալսարանի շրջանավարտն ես, որտեղ ժամանակին սովորել են մեծանուն հայեր՝ ՀՀ ազգային հերոս Մովսես Գորգիսյանը, Արցախի հերոս Մեխակ Մեխակյանը, Ռազմիկ Դավոյանը, Հրանտ Մաթևոսյանը, Սերո Խանզադյանը, Հենրիկ Մալյանը, Վանուշ Խանամիրյանը և այլք, պարտավորեցնող և ոգևորիչ է:

Իմ կյանքի նվիրական նպատակներից է կլինիկական հոգեբանության ոլորտում լավագույն մասնագետներից մեկը դառնալը, պետության զարգացման գործում ներդրում ունենալը: Այս ցանկության ձևավորման մեջ իր մեծ ներդրումն ունի համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը, որը մշտապես ուսանողի կողքին կանգնելու և աջակցելու պատրաստակամություն է հայտնում:

Նոր նպատակների և գաղափարների հետքերով շուտով արդեն կշարունակեմ ուսումս մագիստրատուրայում՝ կլինիկական հոգեբանություն և հոգեթերապիա որակավորմամբ:

Մարիամ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ

Երախտագիտության խոսք եմ հղում բոլոր նրանց, ովքեր կրթել են ինձ

Մարդու կյանքում յուրաքանչյուր օր նոր հնարավորություն է՝ առաջ քայլելու և սեփական ուղին կերտելու համար: Եվ այն հաջողությունները, որոնք առկա են ներկայում, մարտահրավերներով և խոչընդոտներով անցած ճանապարհի արդյունքն են: Իմ ներկայի հիմքը պատմությունն է, որը սկսվեց մասնագիտությանս ընտրության ճանապարհին: Ավարտելով Երևանի Նար-Դոսի անվան N 14 հիմնական դպրոցը՝ 2015 թ. ընդունվեցի Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հենակետային վարժարան-ավագ դպրոց: Վարժարանը, ի դեմս տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Նաիրա Սաֆարյանի, իր հյուրընկալ դռները բացեց իմ առջև՝ որպես «Հոգեբանություն» ենթահոսքի սան: Երեք տարիների ընթացքում դասընկերներիս հետ միասին կերտեցինք մեր պատանեկան ամենավառ հուշերը: Կրթվելուց և գիտելիքներ ստանալուց զատ, մասնակցեցինք օլիմպիադաների, տարատեսակ միջոցառումների, ինչպես նաև էքսկուրսիաների՝ մեր երկրի պատմական հուշահամալիրներով, թանգարաններով ու տեսարժան վայրերով: Վերջինիս հարցում մեծ էր մեր սիրելի դասղեկի՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմինե Եփրիկյանի ավանդը, ով նպատակ ուներ մեր մեջ սերմանել միասնականություն:

Այնուհետև, վերցնելով սիրելի ուսուցիչներիցս ստացած գիտելիքներն ու խորհուրդները, բարեհաջող կերպով հանձնեցի բոլոր քննություններն ու բարձր գնահատականներով ճանապարհ ընկա դեպի բուհ: Ընդունվեցի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի հոգեբանության բաժին: Որոշել էի հոգեբան դառնալ և մեծ ջանասիրությամբ էի ընթերցում դասախոսներիս հանձնարարած գրքերը, հետաքրքրությամբ ու ոգևորությամբ կատարում հանձնարարված առաջադրանքները: Գերազանց առաջադիմությանը զուգահեռ՝ առաջին կուրսում եղել եմ նաև Ուսանողական խորհրդի բանավեճի ակումբի կազմում և էլ ավելի զարգացրել խոսքի ու մտքի շարադրանքի հմտություններս:

2019 թ., հաղթահարելով մրցութային փուլը, մասնակցել եմ ՀՊՄՀ-ի և Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանի համագործակցության շրջանակներում կազմակերպված «Աշնանային դպրոց» ծրագրին: Այս ծրագիրը ոչ միայն հնարավորություն ընձեռեց համալրել մասնագիտական տեսագործնական գիտելիքները, այլև գտնվել «Խաղի և խաղալիքների հոգեբանամանկավարժական փորձաքննության լաբորատորիա»-ում, գլխուղեղի «Նեյրո-կոգնիտիվ հետազոտությունների կենտրոն»-ում, «Աուտիստիկ սպեկտորի խանգարումների համալիր ուղեկցման դաշնային ռեսուրսային կենտրոն»-ում: Արդյունքում հայրենիք վերադարձա վառ և գունեղ տպավորություններով, մասնագիտական աճ գրանցելու էլ ավելի մեծ ցանկությամբ: Իսկ ծրագրի շրջանակներում ընկերների հետ ձեռք բերված կապը շարունակվում է մինչ օրս:

Կյանքը, բնականաբար, հաջողությունների ու կորուստների, ուրախությունների ու տխրությունների անխուսափելի շղթա է: 2020 թվականը սկսվեց մեծ համաճարակի բռնկումով և նոր մարտահրավեր ստեղծեց բո-

➤8

...բոլոր նրանց, ովքեր կրթել են ինձ

➢7 լորի համար: Բարեբախտաբար, մեր բուհը, շնորհիվ արդեն իսկ գործարկվող «Classroom» հարթակի, արագ ապահովեց ուսանողների ինտեգրումը առցանց ուսուցմանը: Համաճարակի դժվարությունները դեռ լիովին չհաղթահարած՝ վրա հասավ պատերազմի արհավիրքը: Տեղին է արձանագրել, որ այս ողջ ընթացքում պրոֆեսորադասախոսական անձնակազմը ֆակուլտետի դեկան, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուզաննա Պետրոսյանի գլխավորությամբ, աջակցել է ուսանողներին, խուճապի կամ անգործության մատնվելու փոխարեն հորդորել շարունակել կրթական գործընթացի անխափան ընթացքը՝ հիմնավորելով, որ թշնամու նպատակն է տեսնել ընկճված, հուսահատության ու անգրագիտության մատնված հակառակորդի, իսկ դա անկարելի է:

Անցնելով առցանց, հիբրիդային ուսուցման և այլ դժվարությունների միջով՝ հաջողել ենք նաև մասնագիտական պրակտիկա անցնել դպրոցներում, հոգեբանական կենտրոններում, ինչպես նաև հատուկ կրթահամալիրում, որը յուրահատուկ փորձառություն ձեռք բերելու հնարավորություն էր:

Ինձ համար անգնահատելի է ավարտական աշխատանքիս գիտական ղեկավար, պրոֆեսոր Սուսաննա Փիլոսյանի դերակատարումը, ով սովորեցրել է քայլել գիտության ճանապարհով:

2022 թ. գերազանցությամբ ավարտելով բակալավրի կրթական ծրագիրը՝ ընդունվեցի արդեն հարազատ դարձած ֆակուլտետի Մանկավարժական հոգեբանության բաժին՝ որպես մագիստրոս: Այս ընթացքում հասցրել եմ ևս մեկ անգամ մասնակցել «Աշնանային դպրոց» ծրագրին, որը կազմակերպվել էր մեր համալսարանի ուսումնական բազայում՝ Աղավնաձորում՝ հյուրընկալելով օտարերկրյա գործընկեր բուհերի ուսանողներին:

Մասնագիտական պրակտիկայի շրջանակներում հնարավորություն եմ ունեցել դասախոսել առաջին կուրսեցիներին: Տպագրել եմ մի քանի գիտական հոդվածներ հայերեն և օտար լեզուներով: Զուգահեռաբար զբաղվել եմ մագիստրոսական թեզի հետազոտությամբ և շարադրմամբ՝ ստանալով գիտական ղեկավարիս՝ հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիդա Արամյանի աջակցությունը:

Բուհական ուսումնառության վեց տարիների ընթացքում, իրականացնելով կուրսի ավագի պարտականությունները, փորձել եմ նաև իմ ոգևորությամբ վարակել կուրսընկերներիս, նրանց հետ կիսել գիտելիքներս:

Ամփոփելով իմ անցած ուղին՝ անդրադառնամ ներկային ու ապագային: Այժմ գերազանցությամբ ավարտել եմ նաև մագիստրոսական կրթական ծրագիրը և ընդունվել՝ ասպիրանտուրա «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ: Գիտելիքներս իրենց կիրառությունն են գտել նաև աշխատանքային գործունեության մեջ, և ուրախ եմ, որ աշխատելու եմ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի N 57 հիմնական դպրոցում որպես հոգեբան:

Ի վերջո, երախտիքիս խոսքն եմ հայտնում երբևէ ինձ դասավանդած բոլոր ուսուցիչներիս, պրոֆեսորադասախոսական ողջ անձնակազմին, մտերիմներիս ու բոլոր նրանց, ովքեր կրթել են ինձ և օգնել դառնալ այն անձը, որը կամ այսօր: Ցանկանում եմ, որ իմ պատմության մեջ դերակատարում ունեցող ամեն ոք զգա իր կարևորությունը, քանզի ամենն այսչափ իմաստավորված չէր լինի առանց նրանցից յուրաքանչյուրի աջակցության, ոգևորող խոսքերի և անմիջական մասնակցության:

Քնարիկ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ

Երազանքներն իրականանալու սովորություն ունեն

Մանկավարժ դառնալն ինձ համար եղել է մանկության երազանք: Տարիների ընթացքում իմ փոքրիկ երազանքը համառորեն քայլել է ինձ հետ և դարձել է մեծ նպատակ՝ ինձ ուղղորդելով Մանկավարժական համալսարան: Դիրքորոշումս հստակ էր՝ ես պետք է հետագա սերունդներին կրթող արժանի և գիտելիքներով զինված մասնագետ դառնամ:

Ուսուցիչը կերտում է ճակատագրեր. ամենևին պատահական չէ մասնագիտությանս ընտրությունը: Բանասեր լինելն ինձ համար առաքելություն է: Ես ընտրել եմ Բանասիրական ֆակուլտետը, որտեղ կերտվում են ճակատագրեր, որտեղ կրթվում ես, կայանում, զարգանում և ամուր կանգնում սեփական հողի վրա՝ հասկանալով, որ կյանքիդ լավագույն ընտրությունը կատարել ես արդեն:

Համալսարանական տարիներն ինձ համար եղել են ձեռքբերումների և հաղթանակների տարիներ. պատահական չէ ասված, որ դրանք մեր լավագույն և երբեք չկրկնվող տարիներն են... Տարիներ, որոնք կոփել են, բարձրացրել, սովորեցրել են գնահատել և արժևորել ամենաթանկը՝ ժամանակը, որը նվիրել ենք համալսարանին՝ վստահ լինելով, որ մեր բոլոր սպասելիքները մի գեղեցիկ օր իրականություն կդառնան: Այսօր վստահաբար կարող եմ ասել՝ այդպես է:

Ինչպես առաջին օրը համալսարան մուտք գործելիս, այնպես էլ չորս տարիներն ամփոփող եզրափակիչ օրը տպավորություններս սպասելիքներիս չափ մեծ են եղել և մնում: Սա էլ առաջմղիչ ուժն է ավելիին ձգտելու, քո ոլորտում լավագույնը լինելու և սերունդներին կրթելու անձնվեր գործը ուսերիդ հպարտորեն և արժանապատվորեն կրելու համար...

Ես թերթում եմ իմ քառամյա ուսանողական տարիների գեղեցիկ ու հիշարժան էջերը և խոստանում, որ հավերժ կպահեմ սրտիս ամենասիրուն և տաքուկ անկյունում՝ նոր ուղու էջերը առավել ոգևորությամբ թերթելու ակնկալիքով..

Շնորհակալ եմ Բանասիրական ֆակուլտետին իմ հաղթանակների և ձեռքբերումների համար:

Ռիտա ԴԱՆԻԵԼՅԱՆ
Գեղարվեստական կրթության ֆակուլտետ

Ես ավելի շատ սիրահարվեցի մասնագիտությանս

Ողջույն, ես Ռիտան եմ՝ ՀՊՄՀ Մշակութաբանություն բաժնի շրջանավարտ: Համալսարան ընդունվելը եղել է ամենաբարդ որոշումներիցս մեկը, երբ, բնավորությանս համաձայն, չէի կողմնորոշվում մասնագիտության և բուհի ընտրության հարցում: Վերջապես, թեև այլ էր ընտրությունս, ուսուցչուհուս խորհրդով, ընտրությունս կանգ առավ Մանկավարժական համալսարանի վրա, և դիմում-հայտը լրացնելու վերջին օրերն էին, երբ պատահական նկատում եմ Մշակութաբանություն մասնագիտությունը, մանրամասն հետաքրքրվում և կտրուկ փոխում որոշումս՝ Սոցիալական աշխատանքից անցնելով վերջինիս, քանի որ այն միանգամից շատ ազդեցիկ ու բացառիկ թվաց, որում ես գնալով համոզվում էի:

Ինչևէ, առաջին տպավորությունը համալսարանի արտաքինին՝ հիասթափեցնող էր, բայց նրա մի մասը դառնալը և ներսից ճանաչելը ստիպեց հասկանալ, թե որքա՜ն տարբեր էր այն՝ որպես գեղագիտության և արվեստի մարմնացում:

Ամբողջությամբ նկարներով ու քանդակներով պատված լսարանները, բարեհամբույր դասախոսները, ուսումնասիրության առարկաները պատճառ դարձան ավելի շատ սիրահարվելու մասնագիտությանս ու գիտակցելու, որ դրանով պետք է դառնալ մեր մշակույթի արժանի կրողն ու զարգանալ, պահպանել այն, փոխանցել հետագա սերունդներին, քանզի յուրաքանչյուր ժողովրդի մշակույթն է իր էության ու կերպարի խոսուն վկան ու տարբերակիչ գիծը:

Իհարկե, համալսարանական կյանքը հարթ չի ընթացել, այս տարիների ընթացքում եղել են նաև դժվարություններ, որոնք սովորեցրել են դիմակայել ու հաղթահարել դրանք ամեն պարագայում, որոնցից անմասն են նաև դասախոսների հետ ջերմ զրույցներն ու քննարկումները, դասերը՝ նաև հետագա կյանքի համար:

Համալսարանի ձեռքբերումներից են ընկերներս, որոնց հետ հարազատ դարձա: Պետք է նշեմ նաև ուսանողական խորհուրդը, որը միավորեց ու մտերիմ դարձրեց ուսանողներին տարբեր ծրագրերի, արշավների, մրցույթների, միջոցառումների, կամավորական աշխատանքների շուրջ՝ հագեցնելով ուսանողական կյանքս:

Ինչպես անսպասելի ու հաճելի էր համալսարան անվճար ընդունվելը, նույնքան հաճելի էր այն գերազանց ավարտելն ու անսպասելի՝ լավագույն ուսանողներից մեկը լինելը, ինչը պարտավորեցնում է բարձր պահել այդ պատիվը:

Չնայած անասելի արագ ու աննկատ անցան այս չորս տարիները, ու կարծես երեկ էր, որ հենց առաջին օրը ուշացած գնացի դասի, որի մասին ծիծաղով եմ հիշում, համալսարանը նախապատրաստեց ինձ կյանքի հաջորդ փուլին, տվեց առաջ շարժվելու նոր հնարավորություններ, իսկ մեր չարաճճիություններն ու անսպառ ծիծաղը, բարձր ձայները, երգել-պարելու և սնվելու համար դասամիջոցին անհամբեր սպասելը, մարդիկ, այն վայրերը, որտեղ անց ենք կացրել մեր առօրյան, մշտապես վառ կմնան՝ հիշեցնելու, որ ճիշտ է, ուսանողական տարիներն առանձնահատուկ են, որոնք ես քիչ, թե շատ վայելել եմ:

Շնորհակալություն եմ հայտնում Գեղարվեստական կրթության ֆակուլտետին և պրոֆեսորադասախոսական կազմին, իմ ուսուցչուհուն, ընտանիքիս ու ընկերներիս, Ուսանողական խորհրդի նախագահին ու անդամներին, ընդհանրապես Մանկավարժական համալսարանին՝ իմ մեջ բարձր արժանիքներ սերմանելու, տված գիտելիքի, աջակցելու և անմոռաց հիշողությունների համար:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ